ԱԿՆԸ ԵՒ ՆՐԱ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Շողիկ Ոսկանեան

Պատմական աղբիւրները հաւաստում են, որ Ակնը կառուցուել է 1021 թուականին Սեբաստիայ տեղափոխուած եւ յետագայում այնտեղից տարագրուած Արծրունիների եւ Անիից գաղթած հայերի կողմից: Այս մասին Թ. Ազատեանը իր յիշատակարանում գրում է. «Հին պատմագիրներու համաձայն 1021 թուականին, Սենեքերիմ Արծրունին երբ իր զաւակներով ու հետեւորդներով Սուազ կը գաղթէ Վանէն, իր իշխաններէն ոմանք կը բաժանուին անկէ ու կու գան Եփրատի եզերքը կը շինեն Ակն քաղաքը...»[1]:

Ակնեցիները Վասպուրականի եւ Անիի իշխանական գերդաստանների այն շառաւիղներն են, որոնք պատմաշխարհագրական նոր միջավայրում եւ կեանքի անսովոր պայմաններում կարողացել են անաղարտ պահել իրենց մեծ նախնիների իշխանական սովորոյթները, տոհմիկ բարքերն ու աւանդոյթները եւ նրանց բնորոշ մենտալ-հոգեբանական առանձնայատկութիւնները՝ մտքի ճկունութիւնը, հնարամտութիւնը, խոհական դատողութիւնը, ձեռներէցութիւնը, աշխատասիրութիւնը, արժանապատուութիւնը, վայելչասիրութիւնը, նախանձախնդրութիւնը, կամքի ու կորովի կարողութիւնը: Դրանք ուղղակիօրէն արտապատկերուած են իրենց կառուցած եկեղեցիների, վանքերի, ապարանքների եւ տների ճարտարապետական հոյակերտ յօրինուածքների վրայ: Այս առթիւ հետաքրքիր դիտարկում ունի Ա. Քեչեանը. «Դիտել այդ քաղաքը իր շքեղ ապարանքներով ու թաղերով, եկեղեցիներով ու դպրոցներով, հաւասար է գրքի մը ընթերցման, ուր կը գտնենք զայն կերտողներու ամբողջական կեանքը...»[2]:

Ակնը տեղակայուած է Արեւմտեան Եփրատի (Կարասու) աջ ափին: Սկզբնաղբիւրներում նրա անունը յիշատակուել է Մայրընդուրիկ[3], թրքական աղբիւրներում այն կոչուել է Էգին, իսկ աւելի ուշ՝ Քեմալիէ անուններով:

Արեւմտեան Հայաստանի ամենամեծ եւ հայաշատ գիւղաքաղաքներից մէկն է Ակնը, որտեղ 1885 թուականի մարդահամարի տուեալներով բնակւում էր 10 000 մարդ, որից 5442-ը հայ բնակչութիւն էր: Ակնայ գաւառակը, որն ունէր 100-ից աւելի փոքր ու մեծ հայկական գիւղեր, մինչեւ ցեղասպանութիւնը եղել է Արեւմտեան Հայաստանի Խարբերդի վիճակում, իսկ ներկայումս Թուրքիայի Երզնկայ վիլայէթում: Ակնից յետոյ հայաշատ եւ խոշոր գիւղաքաղաքներ էին Կամարկապը, որն ունէր 1133 հայ բնակչութիւն եւ Ապուչեխը՝ 1066 հայ բնակչութիւն: ԺԹ. դարի 70-80-ական թուականներին Ակնում եւ նրա արուարձաններում հայերի ընդհանուր թիւը հասնում էր 9967-ի, որից, ինչպէս նշեցինք 5442-ը բնակւում էր միայն Ակնում: Յայտնի էին նաեւ Լիճքը, Կարաուշլանը, Նարուերը, Վանքը, Որակը, Շրզուն, Բենկայը, Աշոտկայը, Մուշեղկայը եւ այլ գիւղեր:[4] ԺԶ. դարում Ակնը իր արուարձաններով նոյնպէս նուաճուեց թուրքերի կողմից, որի հետեւանքով հայկական շատ գիւղեր կամաւոր թէ բռնի ձեւով կրօնափոխուեցին եւ տարիների ընթացքում դարձան թրքախօս: Այդ գիւղերի շարքն են դասուել Արգոյը, Ագարակը, Ապրանքը, Սանդուխը եւ այլն (շուրջ 40 գիւղ): Այս մասին Գ. Սրուանձտեանցը ցաւով գրում է «... Այս ո՞րքան թեթեւ է եղած ասոնց հաւատքը, միթէ որոնք որ ցայսօր մնացեր են հայ, պակաս բռնութիւններ կրած են... Ո՜հ, մարդ չկրնար առանց արտասուելու լսել եւ դիտել ասոնք»[5] :

Ակնայ կլիման բարեխառն է, օդը մաքուր եւ առողջարար, ջուրը առատ եւ քաղցրահամ, որի շնորհիւ բուսականութիւնը հարուստ է ու փարթամ: Այստեղ յատկապէս զարգացած էր այգեգործութիւնը, խաղողագործութիւնը, գինեգործութիւնը, շերամապահութիւնը, մեղուաբուծութիւնը եւ այլն: Ակնը առեւտրի ու արհեստների զարգացման կենտրոն էր: Արհեստներից, մասնաւորապէս, զարգացած էր գորգագործութիւնը, կարպետագործութիւնը, մետաքսագործութիւնը, հիւսնութիւնը, կօշկակարութիւնը, ոսկերչութիւնը, արծաթագործութիւնը եւ այլն:

Հայ ժողովրդի համար բոլոր ժամանակներում դպրոցը ազգակերտման եւ ազգապահպան դեր է կատարել՝ դառնալով սերունդների կուտակած պատմամշակութային դարաւոր փորձի ուղղակի հաղորդիչը եւ փոխանցողը յաջորդ սերունդներին: Դպրոցը տուեալ ժողովրդի էթնոպատմամշակութային համակարգի ամենակայուն, ամենակենսունակ եւ ամենակազմակերպուած բնագաւառն է: Հայ ժողովուրդը իր գոյութեան արշալոյսին արդէն իսկ գիտակցել էր դաստիարակութեան քաղաքակրթիչ արժէքը եւ ըստ ամենայնի կարեւորել դպրոցի դերը, բացորոշել նրա հիմնական գործառոյթները: Ինչպէս հայրենիքում, այնպէս էլ հայրենիքից դուրս՝ հայաշատ քաղաքներում եւ գաղութներում, հայերը կառուցել են եկեղեցիներ, հոյաշէն խաչքարերով կերտուած գերեզմանոցներ, հիմնել են դպրոցներ, բացել են տպարաններ, հրատարակել են պարբերաթերթեր ու հանդէսներ, ստեղծել են հայրենակցական, բարեգործական, մշակութային միութիւններ ու կազմակերպութիւններ:

Թերեւս այս խորհրդածութիւնները չլինէին, եթէ մեր ձեռքի տակ ունենային համապատասխան աղբիւրներ, արձանագրութիւններ, վաւերագրութիւններ, յուշարձաններ ու յիշատակարաններ Ակնայ եւ նրա արուարձանների շուրջ վեցդարեայ (1021-1610 թթ.) դպրոցների գոյութեան եւ նրա մշակութային պատմութեան մասին: Անշուշտ եղել են դպրատներ ու կրթարաններ եւ դրանց իսկութիւնը առաջին հերթին երաշխաւորուած է Ակնայ առեղծուածային քաղաքաշինութեամբ, նրա ճարտարապետական ինքնատիպ յօրինուածքով, արհեստական բլրամբերի վրայ վեր խոյացող եւ ամֆիթատրոն յիշեցնող 3-4 յարկանի քարաշէն տների հոյագեղ շարուածքով, ապշեցուցիչ վարպետութեամբ գծուած ճանապարհ-փողոցների տրամաբանական դասաւորութեամբ, եկեղեցիների, վանքերի եւ մատուռների ճարտարապետական համալիր կառոյցներով (Ս. Աստուածածին, Ս. Գէորգ, Ս. Նշան, Ս. Սարգիս, Ս. Յակոբ, Ս. Յովհաննէս եւ այլն), որոնք կենդանի եւ խօսուն վկաներն են Ակնայ միջնադարեան քաղաքակրթութեան եւ մշակոյթի ծաղկուն շրջանի մասին:

Առաջին սուղ տեղեկութիւնը Ակնայ դպրոցների մասին հաղորդում է Տէր Յովհաննէս քահանայ Դերձակեանի հետեւալ յիշատակութիւնը՝ «Յովհաննէս եպիսկոպոս Ակնեցի պարոնտէր կոչեցեալն, 1610-ին Ս. Փրկչայ վանքին մէջ հաստատած էր ընծայարան մը, ուր աշակերտներ-ընծայացու կ՝անուանինք - կ՝առնուէին Ակնայ դպրոցներու ընդունակ աշակերտներէն»[6]:

© National Library of Armenia

Սոյն յիշատակութիւնից պարզ է դառնում, որ դեռեւս ԺԷ. դարի սկզբին Ակնում գործել են մէկից աւելի դպրոցներ, որոնք ,ըստ էութեան, եղել են բարձրակարգ կրթարաններ, քանի որ, դրանց հիմքի վրայ 1610 թ. Ս. Փրկիչ վանքում բացուել է ընծայարան՝ հոգեւորականներ եւ այլ մասնագէտներ պատրաստելու նպատակով: Մէկ այլ աղբիւրում նոյն քահանան վկայակոչում է վանքի վանահայր ակնեցի Մարտիրոս վարդապետին, որը 1760 թ. Ս. Փրկիչ վանքում նոյնպէս բացել է ընծայարան, որտեղ բարձր կրթութիւն են ստացել թուով 10 «ընդունակ» եւ «երեւելի» աշակերտներ:

Յետագայում ինչպէս Ակնի, այնպէս էլ Արեւմտեան Հայաստանի հնագոյն բնակավայրերի տնտեսութեան եւ մշակոյթի, առանձնապէս դպրոցների մասին, ուշագրաւ տեղեկութիւններ եւ արժէքաւոր փաստագրութիւններ են հաղորդւում հայ ազգագրագէտ-բանահաւաք ճանապարհորդների ուղեգրութիւններում[7]: Այս տեսակէտից անգնահատելի է նաեւ Գարեգին Սրուանձտեանցի ներդրումը: Իր Ա եւ Բ հատորներից բաղկացած «Թորոս Աղբար Հայաստանի ճամփորդ» գրքում անուանի հրապարակախօսը հանգամանալից անդրադարձել է ինչպէս Ակնայ, այնպէս էլ Մարզուանի, Ամասիայի, Թոքադի, Սեբաստիայի, Արաբկիրի, Մալաթիայի եւ այլ գաւառներին եւ հետաքրքիր տեղեկութիւններ արձանագրել այդ բնակավայրերի ժողովրդագրութեան, մշակոյթի եւ դպրոցների մասին՝ մասնաւորապէս նշելով, որ, ԺԷ. դարի սկզբներին Ակնում եւ նրա արուարձաններում եղել են մէկից աւելի դպրատներ, որոնք ժամանակի պահանջներին համապատասխան ունեցել են ուսուցման կազմակերպման ու կառավարման իրենց ինքնուրոյն ձեւերն ու եղանակները՝ մշտապէս կրելով ժամանակի կրթական շարժումների ազդեցութիւնները: Նա ընդգծում է, որ Ազգային սահմանադրութեան հռչակումից յետոյ, ինչպէս Արեւմտեան Հայաստանի, այնպէս էլ Ակնայ եւ նրա արուարձանների դպրոցները սկսել են գործել միասնական, համընդհանուր կրթական ծրագրերով: Այս հարցերին անդրադարձել է նաեւ ակնեցի Սմբատ Դաւթեանը, որը ԺԹ. դարի վերջերին եւ Ի. դարի սկզբներին Արեւմտեան Հայաստանում նոր դպրոցի եւ նոր մանկավարժութեան գաղափարների ջերմեռանդ ջատագովներից է:

ԺԹ. դարի 70-80-ական թուականները բեկումնային տարիներ են եղել հայ ազգային կեանքում: Մշակութային զարթօնք էր ապրում նաեւ Ակնը իր արուարձաններով հանդերձ: Այսպէս, կրթութեան ոլորտում կղերապահպանողական ուղղութիւնը հետզհետէ իր տեղը զիջում էր առաջադիմական ուղղութիւններին, ստեղծւում էին կրթալուսաւորական ընկերութիւններ ու միութիւններ, լայն թափ էր առնում թատերական շարժումը, ծաւալւում էին գրական-հրապարակախօսական լուրջ աշխատանքներ, ստեղծւում էին կրթական լսարան-ակումբներ, ուր տարաբնոյթ հարցերի շուրջ կազմակերպւում էին բանախօսութիւններ, բանավէճեր, քննարկում-դիտարկումներ, աստիճանաբար գործողութեան մէջ էին դրւում սահմանադրութեան հռչակած կրթական հիմնադրոյթները, բարձրացւում էին ազգային ինքնագիտակցութեան, ազգային ինքնորոշման եւ ազգի հեռանկարային զարգացման հարցեր: Այս բոլորը, անշուշտ, ազդարարում էին նոր ժամանակների մուտքը, բարձրացնում ազգային գիտակցութեան ոգին, խթանում ազգային գաղափարախօսութեան ձեւաւորման գործընթացը: Նոր ժամանակի ծնունդ

էին նաեւ բարեգործական, հայրենակցական, մշակութային ընկերութիւններն ու միութիւնները, որոնք նպատակ ունէին ժողովրդին կրթել ու լուսաւորել դպրոցաշինութեան, հրապարակախօսութեան, ժողովրդական թանգարանների, կրթական լսարանների, գրադարան-ընթերցարանների հիմնադրման եւ կրթասիրական աւանդոյթների ամրագրման միջոցով:

Առաջին կրթական ընկերութիւնը Ակնում «Ազգասիրական» միութիւնն էր, որի նպատակը դպրոցաշինութիւն էր: Այսպէս, ընկերութիւնը 1870 թ. հիմնեց Ակնայ միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում էին Ակնայ Նարեկեան եւ Ներսիսեան նախակրթարաններից ընտրուած լաւագոյն աշակերտները: Իբրեւ վարժարանի տեսուչ եւ ուսուցիչ, լիաթոշակ վճարումով, հրաւիրուեց Խոսրով Մուրատեանը, ինտելեկտուալ եւ զարգացած մի անձնաւորութիւն, որը քաջ տիրապետում էր հայերէն, թրքերէն, ֆրանսերէն, անգլերէն լեզուներին: Իբրեւ հայերէնի եւ ֆրանսերէնի այցելու ուսուցիչ հրաւիրուեց նաեւ Ազարիա Դերձակեանը, որը միաժամանակ դարձաւ Ակնայ թատերական շարժման նախաձեռնողը եւ հիմնադիրը՝ 1873 թ. բեմադրելով «Ս. Մեծն Ներսէս» պիեսը[8]: Այս վարժարանի շրջանաւարտներից են եղել Սմբատ Գաբրիէլեանը, Նիկողոս Թոթուայեանը, Վահան Գուլումճեանը, Մարտիրոս Իգնատոսեանը, Սմբատ Դաւթեանը եւ ուրիշներ:

Առաջադէմ երիտասարդների մի խումբ (Ս. Գաբրիէլեան, Հ. Գորեան, Թորոսեան եւ ուրիշներ) հիմնեց «Ուսումնասիրական» ընկերութիւնը, որը Ակնում բացեց լսարան, ժողովրդական թանգարան եւ հրապարակախօսական ակումբ՝ բնակչութեան շրջանում լուսաւորութիւն տարածելու նպատակով: Ընկերութիւնը միաժամանակ հրատարակեց «Ծաղիկ» շաբաթաթերթը: Ակնում կարճատեւ գործել է նաեւ «Շահաբեր» միութիւնը, որի նպատակը ակնեցիների խնայողութիւնները պահելու համար բանկային համակարգ ստեղծելն էր: Այս միութիւնը, ինչպէս Սրուանձտեանցն է արձանագրում, չի արդարացրել իրեն, քանի որ՝ «Ակնայ յետին հայն անգամ իր ունեցած չունեցածը գօնսոլիտի, բաղդի թղթոյ փոխարինած էր եւ ամենուն յայտնի է, թէ այս բաղդն ի՞նչ դժբաղդութիւններ բերաւ իրեն յուսացողաց գլխուն. եկեղեցաց եւ վարժարանաց գումարներն ալ միեւնոյն հեղեղը տարած էր»[9]:

Նմանատիպ ընկերութիւններ հիմնուեցին նաեւ Ապուչեխում եւ Կամարկապում: 1880 թ. Հմայեակ Ազատեանի եւ Շաւարշ Հովիւեանի ջանքերով Ապուչեխում հիմնադրուեց «Արշալոյս երիտասարդաց» եւ «Վարագայ Սանուց» միութիւնները: Այստեղ Յարութիւն Պէչոխան Ապուչեխցու խմբագրութեամբ հրատարակուեց նաեւ «Մտրակ» շաբաթաթերթը, որն ունէր ազատական ուղղուածութիւն[10]: Կամարկապում հիմնուեցին «Ազգանազեան», «Դպրոցասիրաց» եւ «Յոյս ի պսակ» ընկերութիւնները: Սակայն Ակնայ եւ նրա արուարձանների մշակութային վերելքը երկար կեանք չունեցաւ. այն կասեցուեց 1895-1896 թթ. հայկական զանգուածային ջարդերով: 1896 թուականի սեպտեմբերին թուրք ու քուրդ ջարդարարները խուժեցին Ակն եւ նրա մերձակայ գիւղերը՝ Լիճք, Բենկայ, Զմարայ, Կասմայ, Ապուչեխ, Կամարկապ եւ այլուր եւ անխնայ կոտորեցին հայերին, կողոպտեցին նրանց գոյքը եւ ունեցուածքը, հրդեհեցին տներն ու եկեղեցիները: Ըստ վիճակագրական տուեալների զոհերի թիւը հասել է 3000-ի[11]:

Սակայն այդ դժնդակ օրերը նոյնպէս անցան եւ ակնեցին նորից ոտքի կանգ-

© National Library of Armenia

նեց, վերաշինեց իր տունը, եկեղեցին ու դպրոցը, աշխուժացրեց առեւտուրը եւ մշակութային կեանքը, որն առանձնապէս նոր թափ առաւ 1908 թուականին երիտթուրքերի յեղափոխութեան եւ սահմանադրութեան հռչակման՝ ժամանակագրական առումով, այդ կարճատեւ տարիներին:

1895-1896 թուականներից սկսած արեւմտահայ իրականութեան մէջ նոր թափ առաւ հայաթափման գործընթացը, իսկ 1915 թուականի ցեղասպանութեամբ Արեւմտեան Հայաստանում իսպառ մարեց հայկական կեանքը: Ակնեցիների արտագաղթը սկսուել էր դեռեւս ռուս-թուրքական պատերազմի (1877-1878 թթ.) տարիներին, իսկ դրանք աւելի յաճախակի եւ հետեւողական բնոյթ կրեցին յատկապէս ԺԹ. դարի վերջին տասնամեակում տեղի ունեցած ողբերգութիւնների հետեւանքով: Այդ մղձաւանջային տարիներին մեծ թուով ակնեցիներ սփռուեցին աշխարհով մէկ, իսկ նրանց զգալի մասը ապաստան գտաւ ԱՄՆ-ում՝ դառնալով այդ երկրի հայկական համայնքի ձեւաւորման առաջին սերնդի ներկայացուցիչները: 1898 թ. Բոստոնում նրանք հիմնեցին «Ակնայ Ուսումնասիրաց ընկերութիւնը», որն ունեցաւ գործունէութեան երեք շրջան՝ 1898-1910 Բոստոնում, 1911-1913՝ Նիւ Եորքում եւ 1919-1926՝ Նիւ Ջերսիում: Ընկերութեան բուն նպատակն էր նիւթական օգնութիւն յատկացնել Ակնայ դպրոցներին, կարիքաւոր ընտանիքներին, իսկ Մեծ եղեռնից յետոյ օգնել եւ օժանդակել աշխարհի տարբեր ծայրերում տարագրուած ակնեցիներին: 1945 թուականին Նիւ Եորքում նրանք հիմնեցին «Ակնայ Հայրենակցական միութիւնը», որի նպատակն էր նիւթապէս օժանդակել տարբեր երկրներում հանգրուանած ակնեցիներին եւ կապ հաստատել նրանց միջեւ: Միութիւնը իր մասնաճիւղերը ստեղծեց նաեւ Հալէպում, Փարիզում, Ալեքսանդրիայում եւ այլուր:

Ակնը տուել է գիտութեան ու մշակոյթի բազմավաստակ մշակներ՝ գրողներ, արուեստագէտներ, ուսուցիչներ, բժիշկներ, իրաւագէտներ, եկեղեցականներ, պետական ու քաղաքական գործիչներ: Ակնից են սերել Գր. Զօհրապը, Ն. Գալանտերեանը, Է. Շահինը, Ռ. Շիշմանեանը, Յ. Նալեանը, Սիամանթոն, Մ. Մեծարենցը, Ա. Արփիարեանը, Ա. Զօպանեանը, Մ. Զերազը եւ այլք: Աւելի քան երկու դար Ակնը ամիրայական նշանաւոր գերդաստաններ է տուել Կոստանդնուպոլսին եւ Զմիւռնիային՝ Տատեաններ, Ճեզայիրլեաններ, Դիւզեաններ, Թերզեաններ, Խորասանճեաններ, Դիւրիններ եւ այլք: Թ. Ազատեանը գրում է՝ «Ակնցի նշանաւոր Ամիրաներ ԺԸ եւ ԺԹ դարերուն փայլած են ու իրենց ծառայութիւններով նշանակալից դերեր կատարած են պետական ու հանրային կեանքի մէջ», իսկ պատրիարք Նալեանը իր «Գանձարան Ծանուցմանցում» աւելացնում է՝ «... Ահա այս ազնուականներէն է, որ սերած են համբաւաւոր Ամիրաները, որոնք աւատապետական շրջան մը ապրելէ յետոյ, Օսմանեան տիրապետութենէն վերջ Իսթանպուլ եկած եւ իրենց պետական ու հանրային ծառայութիւններով մեծ հռչակ հանած են»[12] :

Ակնը տուել է նաեւ ուսուցիչների փառահեղ սերունդ՝ Սարգիս Գասպեան, Մուրադ վարժապետ, Հայկազուն Պեկեան, Աբրահամ Մուրադեան, Նշան Թորոսեան, Վահրամ Արծրունի, Մաղաքիա Փափազեան, Ազարիա Դերձակեան, Արուս Ազատեան, Արմէնակ Շեփիկեան, Նշան Ճանիկեան եւ շատ ուրիշներ:

Հայ կրթական կեանքում ուշագրաւ երեւոյթներից մէկը թերեւս աղջիկների կրթութեան խնդիրն էր: Օսմանեան

Թուրքիայում, որտեղ թագաւորում էին արեւելեան բարքերն ու սովորոյթները, կինը գրեթէ զրկուած էր մարդկային բոլոր իրաւունքներից եւ դիտւում էր իբրեւ վայելքի առարկայ եւ էժան աշխատուժ: Եթէ Թուրք կինը տակաւին գտնւում էր միջնադարեան եւ արեւելեան գերութեան մէջ՝ կրելով հարեմային կեանքի եւ բազմակնութեան կարգավիճակի նուաստացուցիչ բեռը, ապա նոյն միջավայրում եւ գոյութեան առաւել վատթարագոյն պայմաններում ապրող հայ ժողովուրդը ձեռնամուխ եղաւ աղջիկներին կրթութիւն տալու եւ նրանց համար առանձին վարժարաններ հիմնադրելու արժանայարգ գործին: Դեռեւս ԺԹ. դարի առաջին տասնամեակներին ազգային մեծ բարերար Յարութիւն Պէզճեանը Գում Գաբուի Մայր վարժարանին կից աղջիկների համար բացեց Արհեստանոց՝ եկեղեցական զգեստներ կարելու նպատակով: Աւելի ուշ Կ. Պոլսում հիմնադրուեց «Լուսաւորչեան աղջկանց» վարժարանը, որտեղ աղջիկները գիտելիքներ ստանալուն զուգահեռ, ձեռք էին բերում նաեւ աշխատանքային հմտութիւններ ու կարողութիւններ: Նմանատիպ վարժարաններ հիմնուեցի նաեւ Կ. Պոլսի միւս թաղամասերում: Գրեթէ նոյն շրջանում Զմիւռնիայում գործեց Հռիփսիմեան վարժարանը, որի ծաղկուն շրջանը Մ. Մամուրեանի տնօրինութեամբ ԺԹ. դարի 80-ական թուականներն էին, երբ վարժարանում սովորում էին 400-ից աւելի աղջիկներ: ԺԹ. դարի 70-ական թուականներին Գ. Սրուանձտեանցի ջանքերով Վանում բացուեց Սանդխտեան վարժարանը, Էրզրումում՝ Թարգմանչաց եւ Հռիփսիմեան, Այնթապում՝ Հայկանուշեան, Կեսարիայում՝ Հայկուհեան իգական վարժարանները: Այդօրինակ վարժարաններ բացուեցին նաեւ Արեւմտեան Հայաստանի միւս գաւառներում եւ Թուրքիայի հայաշատ կենտրոններում: Հարկ է նշել, որ այնտեղ ուր հնարաւոր չէր բացել առանձին իգական վարժարաններ, բացւում էին երկսեռ վարժարաններ: Այսպէս, օրինակ, Ակնայ գաւառակում գործում էին Ս. Ներսիսեան-Հռիփսիմեան, Արամեան-Սանդխտեան եւ Վարագայ երկսեռ վարժարաններ, որտեղ 1900-1901 դպրոցական շրջանում սովորել են 200-ից աւելի աղջիկներ:

1901-1903 թուականների վիճակագրութեամբ Ակնում, Ապուչեխում, Կամարկապում եւ Բենկայում գործել է չորս դպրոց: Ակնի Ս. Ներսիսեան-Հռիփսիմեան երկսեռ վարժարանը ունեցել է Զ դասարան: Այստեղ 1900-1901 դպրոցական շրջանում սովորել է 450 աշակերտ՝ 320 տղայ, 130 աղջիկ: Ապուչեխում գործել է Վարագայ երկսեռ վարժարանը, այն ունեցել է Ե դասարան, որտեղ նոյն շրջանում սովորել է 115 աշակերտ՝ 73 տղայ, 40 աղջիկ: Կամարկապի Արամեան-Սանդխտեան երկսեռ վարժարանը ունէր Ե դասարան, որտեղ նոյն շրջանում սովորել է 103 աշակերտ՝ 60 տղայ, 43 աղջիկ[13]: Այսպիսով, Ակնայ գաւառակում միայն 1900-1901 դպրոցական շրջանում սովորել է 756 աշակերտ՝ 541 տղայ, 215 աղջիկ:

Ակնայ գաւառակը ունէր 10 եկեղեցի, 5 վանք, որի առաջնորդական տեղապահը այդ շրջանում Տէր Արիստակէս Վարդապետ Խաչատուրեանն էր: Կոստանդնուպոլսի պատրիարքարանի ենթակայութեան ներքոյ Ակնում գործել է նաեւ որբանոց, որտեղ 1900-1901 դպրոցական շրջանում սովորել է 70 երեխայ: Որբանոցը մատակարարուել է արմաւիրցի Թորոսեան եղբայրների կողմից յատկացուած բարեգործական նպաստով: Որբանոցի հոգաբարձութիւնը՝ Տէր Արիստակէս Վարդապետ Խաչատուրեանի նախագա-

© National Library of Armenia

հութեամբ, ունէր հետեւալ կազմը՝ Տէր Մուշեղ քահանայ Տ. Պօղոսեան, Մելքոն էֆէնդի Խասկելեան, Առաքէլ էֆէնդի Սիրունեան, Աստուածատուր էֆէնդի Սարըյեան եւ Մարկոս էֆէնդի Սեմիրճեան[14]*:*

Ակնայ գաւառակի հասարակական-քաղաքական ու մշակութային համայնապատկերը ամբողջական ներկայացնելու նպատակով հարկ է անդրադառնալ նաեւ այդ շրջանում աշխոյժ գործունէութիւն ծաւալած բողոքական եւ միսիոներական կազմակերպութիւններին, որոնք, ունեցել են իրենց կարեւոր դերակատարութիւնը հայ ազգային կեանքում: Նրանց գործունէութեան կենտրոնը, անշուշտ, Կ. Պոլիսն էր, քանի որ այնտեղ էր հաւաքուած հայ մտաւորականութեան ընտրանին: Միսիոներները երկու սեռի հայ երեխաների համար բացել են առանձին բարեկարգ եւ յարմարաւէտ դպրոցներ Վանում, Պարտիզակում, Մարզուանում, Մուշում, Կարինում, Այնթապում, Ակնում եւ այլուր: Յատկապէս աչքի էր ընկնում Այնթապի միսիոներական դպրոցը, որտեղ ուսուցիչների մեծամասնութիւնը հայեր էին, դրանց մէջ իր բեղմնաւոր գործունէութեամբ առանձնանում էր Ալեքսան Պէզճեանը, որը խորագէտ էր բնական գիտութիւնների ասպարէզում եւ բազմաթիւ դասագրքերի եւ ուսումնական ձեռնարկների հեղինակ էր:

Միսիոներները իրենց գործունէութիւնը ծաւալել են նաեւ Ակնում եւ նրա արուարձաններում: Այսպէս, օրինակ, Լ. Զորմիսեանը տեղեկացնում է, որ 1885 թուականին Ակնում գործել են 70 բողոքականներ որոնք հիմնել են նաեւ իրենց դպրոցները: Այստեղ բացուել են նաեւ յարմարաւէտ պայմաններով որբանոցներ, որտեղ այդ շրջանում ընդգրկուել են 100 երեխայ՝ 46 տղայ, 54 աղջիկ[15]*:*

Միսիոներական դպրոցները առանձնացել են ոչ միայն իրենց շէնքային յարմարաւէտութիւններով ու բարեկարգ կառոյցներով՝ այլեւ առաջնորդուելով ժամանակի լաւագոյն եւ առաջադիմական կրթական ծրագրերով՝ միանգամայն ապահովել եւ երաշխաւորել են կրթութեան բարձր մակարդակ: Այս տեսակէտից միսիոներական դպրոցները դրական դեր են կատարել սովորողների մտաւոր եւ գեղագիտական դաստիարակութեան գործում: Առանձնապէս մեծ է եղել այդ դպրոցների դերը, ինչպէս սովորողների տարակողմանի հետաքրքրութիւնների զարգացման, լեզուների խորիմացութեան (ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն, իտալերէն, թրքերէն), մասնագիտական բարձր պատրաստուածութեան, այնպէս էլ գիտամանկավարժական եւ թարգմանական հարուստ գրականութեան ստեղծման գործում: Հարկ է նշել, որ միսիոներական դպրոցներում փայլուն կրթութիւն եւ մասնագիտութիւն ստացած հայ երիտասարդների զգալի մասը անմնացորդ նուիրումով լրացրել են հայ մտաւորականութեան շարքերը՝ ապահովելով իրենց արժանի տեղը հայ հասարակական, քաղաքական եւ հոգեւոր մշակոյթի պատմութեան հարուստ անդաստանում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Թ. Ազատեան**, *Ակն եւ Ակնցիք*, Ազգագրական ու կենսագրական յիշատակարան, Իսթանպուլ, 1943, էջ 20:

2 **Առաքել Մ. Քեչեան**, *Ակն եւ Ակնցիք (1020-1915)*, հտ. Ա, Պուքրեշ, 1942, էջ 58:

2 Գ. Սրվանձտեանցի ստուգաբանութեամբ՝ Մայրընդունակ,- Տե՛ս **Գ. Սրուանձտեանց**, *Թորոս Աղբար Հայաստանի ճամփորդ*, մաս 1-ին, Կ.-Պոլիս, 1879, էջ 250:

3 Ակնայ մի շարք գիւղերի անուններ ունեն «կայ» վերջածանցը: Գ. Սրուանձտեանցի ստուգաբանութեամբ՝ «կայ» նշանակում է «կայան», «տուն»՝ Մուշեղկայ՝ Մուշեղի տուն, Բենկայ՝ Բենիկի տուն եւ այլն (Տե՛ս **Գ. Սրուանձտեանց**, *նոյն տեղում*, էջ 259):

4 Նոյն.տեղում, էջ 254:

5 **Առաքել Մ. Քեչեան**, *Ակն եւ ակնցիք*, էջ 58:

6 Տե՛ս **Պ. Նաթանեան**, *Արտօսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուայ, Բարբերդու, Զարսանճագի, Ճապաղջուրի եւ Երզնկայա*, Կ. Պոլիս, 1878, **Ղազար Զարըգ**, *Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում*, Բէյրութ, 1957, **Հ. Պողոսեան**, *Հանընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գուլան-Տաղի հայ գիւղերը*, Լոս Անջելես, Կալիֆորնիա, 1942, **Վահէ Հայկ**, *Խարբերդ եւ անոր ոսկեդէն դաշտը, յուշամատեան ազգային, պատմական, մշակութային եւ ազգագրական*, Նիւու Յորք, 1959, **Մ. Միրախորեան**, *Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի*, Կ.-Պոլիս 1885, Ա-ԴՕ, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երեւան, 1912, **Ա. Գրացեան**, *Հայաստան, հայեր, պատմութիւն, մշակոյթ, զբաղմունք, կենցաղ, նկարագիր*, Շտուտգարդ, 1946 եւ այլն:

7 Ազարիա Դերձակեանը սովորել է Կ.Պոլսի ազգային վարժարաններում, իբրեւ ուսուցիչ աշխատել է Պէշիկթաշի ազգային վարժարանում, որտեղ էլ Խորէն Գալֆայեանի (Նար-Պեյ) անմիջական ազդեցութեան շնորհիւ ձեռք է բերում թատերական նախասիրութիւններ:

8 **Գ. Սրուանձտեանց**, *Թորոս Աղբար*, էջ 250:

9 **Առաքել Մ. Քեչեան**, *Ակն եւ Ակնցիք*, էջ 87:

10 Տե՛ս *Հայկական Սովետական Հանրագիտարան*, հտ.1, Երեւան , 1974, էջ 225:

11 **Թ. Ազատեան**, *Ակն եւ ակնցիք*, էջ 11:

12 *Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ*, տեսր Ա, Կ.Պոլիս, 1901, էջ 19:

13 Տե՛ս *Ընդարձակ օրացոյց Ազգային հիւանդանոցի*, Կ.Պոլիս, 1900, էջ 351:

14 **Լեւոն Զորմիսեան**, *Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան*, Ա. հտ., 1850-1878, Բէյրութ, 1972, էջ 499:

© National Library of Armenia